ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. փոստ odzun@bk.ru

թիվ 264-13
«05» 12 2013թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 55-ից N 58 որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

12/6/2013

Օձուն համայնքի ղեկավար X ***Ա. Տիտանյան***

Կատարող՝ Ն. Տիտանյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2013 թվականի N 55-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի տասներկուերորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 63-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՁԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (8)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 3
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2013 թվականի N 56-Ն

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ի N 63-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու «13» դեկտեմբերի 2012 թվականի «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 63-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (8) Դեմ (չկա) Ձեռնպահ (չկա)

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 3
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 56-Ն որոշման

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «13» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 63-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու «13» դեկտեմբերի 2012 թվականի «Օձուն գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի մասին» N 63-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 08.04.3. գործառնական դասակարգման նախահաշվի 4729 հոդվածի գումարը պակասեցնել մեկ հարյուր հազար (100.000) ՀՀ դրամով.
2. 06.04.1. գործառնական դասակարգման նախահաշվի 4212 հոդվածի գումարը պակասեցնել երկու հարյուր հիսուն հազար (250.000) ՀՀ դրամով.
3. 08.02.3. գործառնական դասակարգման նախահաշվի 4637 հոդվածի գումարը պակասեցնել երկու հարյուր հազար (200.000) ՀՀ դրամով.
4. 08.02.4. գործառնական դասակարգման նախահաշվի գումարը պակասեցնել երկու հարյուր ութսուն հազար (280.000) ՀՀ դրամով, որից.

   4267 հոդվածի գումարը պակասեցնել մեկ հարյուր երեսունհինգ հազար (135.000) ՀՀ դրամով.

   4269 հոդվածի գումարը պակասեցնել մեկ հարյուր քառասունհինգ հազար (145.000) ՀՀ դրամով.
5. 01.01.1. գործառնական դասակարգման նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունները.

   4212 հոդվածի գումարը պակասեցնել յոթ հարյուր հազար (700.000) ՀՀ դրամով.

   4221 հոդվածի գումարը պակասեցնել մեկ հարյուր հիսուն հազար (150.000) ՀՀ դրամով.

   4111 հոդվածի գումարն ավելացնել չորս հարյուր հիսուն հազար (450.000) ՀՀ դրամով.
6. 04.05.1. գործառնական դասակարգման նախահաշվի գումարն ավելացնել վեց հարյուր իննհիսունհինգ հազար (695.000) ՀՀ դրամով.
7. 10.07.1. գործառնական դասակարգման նախահաշվի 4729 հոդվածի գումարն ավելացնել հինգ հարյուր հազար (500.000) ՀՀ դրամով.
8. 08.02.4. գործառնական դասակարգման նախահաշվի 4819 հոդվածի գումարն ավելացնել երեսունհինգ հազար (35,000) ՀՀ դրամով:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2013 թվականի N 57-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի վարձատրության չափը և գյուղապետարանի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի :
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի բյուջետային հիմնարկների 2014 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 2, 3, 4 և 5 հավելվածների :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (8)
Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 3
Գ. Օձուն

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 57-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 16
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1	2	3	4
1	Համայնքի ղեկավար	1	210.0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	113.0
3	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	113.0
4	Աշխատակազմի քարտուղար	1	130.0
5	Աշխատակազմի գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահ	1	120.0
6	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	120.0
7	Աշխատակազմի առաջատար մասնագետ	5	78.0
8	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ - գանձապահ	1	77.5
9	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	77.0
	Տեխնիկական պաշտոնների անձնակազմ		
10	Հավաքարար	1	60.0
11	Վարորդ	1	100.0
12	Գործավար	1	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	16	1610.5

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 57-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 16
Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՑԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1	2	3	4
1	Տնօրեն	1	105.0
2	Դասավարակ	3	93.0
3	Երաժշտության դասավարակ	0.5	46.5
4	Գործավար, մանկավարժ	1	82.0
5	Տնտեսվար	0.75	47.25
6	Խոհարար	0.75	60.0
7	Հաշվապահ	0.5	40.0
8	Դասավարակի օգնական	3	60.0
9	Խոհարարի օգնական	0.5	40.0
10	Օժանդակ բանվոր	0.5	40.0
11	Դոնապահ	0.5	40.0
12	Բակապահ	0.5	40.0
	Ընդամենը	12.5	999.68

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 3
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 57-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆՆԱ ՀԱԲԵՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 17
Աշխատակիցների հատրիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1	2	3	4
1	Տնօրեն	1	105.0
2	Դասավարակ	3	93.0
3	Երաժշտության դասավարակ	0.5	46.5
4	Գործավար	0.5	40.0
	Պարուսույց, ռուսերենի դասատու	0.5	46.5
5	Տնտեսավար	0.75	47.25
6	Խոհարար	0.75	60.0
7	Հաշվապահ	0.5	40.0
8	Դասավարակի օգնական	3	60.0
9	Խոհարարի օգնական	0.5	40.0
10	Օժանդակ բանվոր	0.5	40.0
11	Բուժքույր	0.5	40.0
12	Բակապահ	0.5	40.0
	Ընդամենը	12.50	999.8

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 4
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 57-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՁՈՒՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 22

Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1	2	3	4
1	Տնօրեն	1	100.0
2	Հաշվապահ	1	75.0
3	Դասատու	17	59.6
4	Տնտեսվար	0.75	46.5
5	Պահակ	0.75	46.5
6	Տեխ. Աշխատող	0.75	46.5
	Ընդամենը	21.25	1327.7

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 5
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 57-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՁՈՒՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

Աշխատակիցների հասպիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1	2	3	4
1	Տնօրեն	1	65.0
2	Գրադարանավար	1	62.0
3	Գրադարանավար	0.75	46.5
4	Ֆուտբոլի թիմի մարզիչ	0.75	46.5
5	Հավաքարար	0.75	49.5
6	Պահակ ցերեկային	0.75	46.5
	Ընդամենը	5	316

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2013 թվականի N 58-Ն

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի տարածքում 2014 թվականի համար, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ասահմանել տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ընթացիկ տարվա՝ 2014 թվականի համար, տեղական տուրքերի և վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

3. Օձուն համայնքի ղեկավարին՝ ապահովել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի և վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումը:

Ապահովել Օձունի գյուղապետարանի վարչական շենքում, մուտքից ներս գտնվող առավել տեսանելի վայրում գտնվող ցուցատախտակների վրա իր կողմից հաստատված՝ սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված տեղեկությունները պարունակող տեղեկանքների հրապարակումը:

Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ իրականացնել հսկողություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (8)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 3
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 58-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝
   1) հիմնական օբյեկտների համար՝
   ա. մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

   2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի "ա." պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար.
   ա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
   բ. 501-ից մինչև 1.000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ.
   գ. 1.001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ.

   3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
   ա. մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.
   բ. 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանել՝ շենքերի շինությունների, քաղաքաշինական և այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
   1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխութուն՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
   2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.
   3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 (երկու հազար հինգ հարյուր) << դրամ:
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 (երկու հազար հինգ հարյուր) << դրամ:

5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) << դրամ:
2) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) << դրամ:
3) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30.000 (երեսուն հազար) << դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 (հիսուն հազար) << դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00 – ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 (քսանհինգ հազար) << դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 (հիսուն հազար) << դրամ
3) բաղնիքների (սաունաների), համար՝ 200.000 (երկու հարյուր հազար) << դրամ
4) խաղատների կազմակերպման համար՝ 500.000 (հինգ հարյուր հազար) << դրամ
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) << դրամ
6) վիճախաղերի կազմակերպման համար՝ 100.000 (մեկ հարյուր հազար) << դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 (մեկ) քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.500 (մեկ հազար հինգ հարյուր) << դրամ:
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3.000 (երեք հազար) << դրամ:
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1.200 (մեկ հազար երկու հարյուր) << դրամ:
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 (յոթ հարյուր) << դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1.000 (մեկ հազար) << դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5 (հինգ հազար) << դրամ:

11. Համայնքի ավագանու կողմից սահմանված՝ համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 (հիսուն) << դրամ մեկ ժամվա համար:
12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու

ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փողհատուցման տեղական վճարը սահմանել 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճարը սահմանել 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

14. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փողհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

15. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար ընթացիկ տարվա համար սահմանել մեկ անձի հաշվով ամսեկան 70 (յոթանասուն) ՀՀ դրամ:

16. շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար ընթացիկ տարվա համար սահմանել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ